ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 8

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած ընդլայնված խորհրդակցության

05.08.2024թ. **ք.Վանաձոր**

Մասնակցում էին

Հ.Ավետիսյանը- մարզպետի տեղակալ
Գ.Ասրյանը - մարզպետի տեղակալ
Կ.Աշրաֆյանը- մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար
Մ.Դալլաքյանը, Ռ.Պողոսյանը, Գ.Քարհանյանը, Կ.Ադամյանը, Ա.Թումանյանը, Վ.Հովհաննիսյանը, Ա.Հակոբյանը, Է.Հախվերդյանը, Ա.Բաղդասարյանը - մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ,
Ա.Սահակյանը – մարզպետի օգնական

Օ ր ա կ ա ր գ ո ւ մ՝

1. Մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարների կողմից 22.07.2024-05.08.2024 ժամանակահատվածում կատարված և առաջիկայում կատարվելիք աշխատանքների վերաբերյալ:

(զեկ. մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ)

2. Այլ հարցեր

Ե լ ույ թ ու ն ե ց ա ն՝

1. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ Ռ.Պողոսյանը ներկայացրեց մարզում առողջապահության ոլորտում իրականացված ընթացիկ աշխատանքները, ինչպես նաև տեղեկատվություն «Ալավերդու ԲԿ»-ում իրականացվելիք ծրագրի վերաբերյալ:
2. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Մ. Դալլաքյանը ներկայացրեց ֆինանսների ոլորտում կատարված աշխատանքները, ինչպես նաև 2024 թվականի մայիսի 25-26-ը տեղացած հորդառատ անձրևների պատճառով տեղի ունեցած աղետի հետևանքների վերացման նպատակով պետության կողմից տրամադրված ֆինանսական միջոցների բաշխման վերաբերյալ:
3. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետի պարտականությունները կատարող Ա.Բաղդասարյանը ներկայացրեց բաժնի կողմից իրականացված և նախատեսված աշխատանքների, ինչպես նաև սեպտեմբերի 17-20-ին Երևանում անցկացվող «Համաշխարհային Հայկական երկրորդ գագաթնաժողովի» միջոցառման նախապատրաստության և անցկացման մասնակցության վերաբերյալ տեղեկատվություն:
4. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետին փոխարինող Վ.Հովհաննիսյանը ներկայացրեց վարչության կողմից համայնքային աշխատողների մրցույթների և համայնքերի աշխատակազմերի հետ տարվող աշխատանքների և վերահսկողության վերաբերյալ տեղեկատվություն:

8. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ Կ.Ադամյանը ներկայացրեց ստորաբաժանման կողմից իրականացվող աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն, ինչպես նաև մարզպետարանի շենքի պատուհանների փոխարինման արդյունքում հանված պատուհանների մուտքագրման և դուրսգրման հետ կապված խնդիրը:

Հանձնարարվեց

1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Հ.Ավետիսյանին՝

1.1 Կրկին անգամ ուսումնասիրել համայնքային միջոցներով իրականացվող շինարարական ծրագրերի նպատակային լինելը, առաջնահերթությունները, օրինականությունը, իրականացվող աշխատանքների որակը, և ներկայացնել տեղեկատվություն:

1.2 Սահմանված կարգով (գրավոր, ստորագրությամբ) ներկայացնել տեղեկատվություն սուբվենցիոն և պետական աջակցության ծրագրերով նախատեսված աշխատանքների որակի և ժամկետների պահպանման ուղղությամբ աշխատանքային խմբի կողմից իրականացվող ստուգայցերի և մոնիտորինգի վերաբերյալ:

2. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Կ. Աշրաֆյանին՝

Ուսումնասիրերել և ներկայացնել տեղեկատվություն ու առաջարկություններ Լոռու մարզպետարանի շենքի պատուհանների փոխարինման արդյունքում իրականացված աշխատանքների ընթացքի, ինչպես նաև հանված պատուհանների մուտքագրման և դուրսգրման հետ կապված խնդրի վերջնական լուծման վերաբերյալ:

3. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին՝

Տրված հանձնարարականների պատշաճ, ժամանակին և սահմանված կարգով կատարումն ապահովելու նպատակով դրանք նախապես քննարկել տվյալ ոլորտը համակարգողի հետ, իսկ պատասխան գրություններ պատրաստելու դեպքում համաձայնեցնել վերջիններիս հետ ու հաստատման ուղարկել նրանց կողմից կամ միջոցով մարզպետի հետ համաձայնեցնելուց հետո:

4. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ Ռ.Պողոսյանին՝

Ուսումնասիրերել և ներկայացնել տեղեկատվություն ու առաջարկություններ «Ալավերդու ԲԿ»-ում նախատեսվող «Դիալեզի բաժանմունք » ստեղծելու ծրագրի արդյունավետության և օրինականության վերաբերյալ:

5. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետի պարտականությունները կատարող Ա.Բաղդասարյանին՝

Քննարկումների արդյունքներով ներկայացնել առաջարկություններ ՄԱԿ-ի UNDP կազմակերպության կողմից առաջարկվող մարզի մեկ բուժամբուլատորիայի վերանորոգման ծրագրի վերաբերյալ:

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ՝ **Ա.ՂԱԶԱՐՅԱՆ**

Արծ. Ս.Մակարյան
Հեռ. 0322 /4-32-99